



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 դեկտեմբեր, 2020 թվականի N° 46-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԲԱԺՆԵՏՈՍԵՐԻ
ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԴԻՄԱՅ ՎՃԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 4-րդ մասով և 59-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1694-Ա որոշման 1-րդ կետը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կառավարման մարմինը և Հանրային հեռարձակողի խորհրդին են վերապահված Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող լիազորված մարմնի իրավասությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ընկերության կողմից տեղաբաշխման ենթակա լրացուցիչ բաժնետոսերի ձեռքբերման դիմաց վճարման միջոց են հանդիսանալու ոչ դրամական միջոցները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո Ր Ո Շ ՈՒ Մ է.

1. Ընկերության կողմից տեղաբաշխման ենթակա լրացուցիչ բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց վճարվող գույքի շուկայական արժեքի սահմանման նպատակով գնահատել սույն որոշման N° 1 Հավելվածում նշված գույքի շուկայական արժեքը:

2. Սույն որոշման N° 1 Հավելվածում նշված գույքի շուկայական արժեքի սահմանման համար օգտվել անկախ գնահատողի ծառայություններից:
3. Սույն որոշման պահանջների կատարումը հանձնարարել Ընկերության գործադիր տնօրենին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ս.ԶԱՔԱՐՅԱՆ

8 դեկտեմբերի, 2020 թվականի

ք. Երևան